# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 37 - 38 (16126) ՇԱԲԱԹ, 18 ՄԱՅԻՍԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

## ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԻՐ ԲԱԽՏԸ ԻՆՔԸ ԿՈՐՈՇԻ»

*Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին մայիսի 14-ին, «Վրացական երազանքի» իշխանության գլուխ գալուց հետո թվով յոթերորդ անգամ, հանդիպում ունեցավ զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ:*



Իր խոսքում, ներկայացնելով երկրում ծավալվող իրադարձությունները եւ դրանց վերաբերյալ իր գլխավորած կառավարության հայեցակետը, վարչապետը առանձնակի ընդգծեց, որ Վրաստանն ինքն է որոշելու իր բախտը, թեպետ պատրաստ է օգնություն ընդունել: Նրա խոսքերով, նախորդ կառավարությունը կողմնորոշված էր Արեւմուտքի եւ ԱՄՆ-ի կողմը, եւ նրա համար ամենակարեւորը միջազգային գնահատականներն էին: «Իսկ մենք հնարավոր ամեն ինչ անում ենք, որ կարգավորենք Վրաստանի ներքին իրավիճակը»,- հայտարարեց նա: Վարչապետը նշեց, որ մինչեւ արտասահմանյան ուղեւորություններն ինքն իր պարտքն է համարում լուծել երկրի ներքին խնդիրները:

Վարչապետն ընդգծել է, որ խոսակցություններն այն մասին, որ իրեն չեն ընդունում արտասահմանում, «լիովին հիմարություն է»: «Ես վերջերս հրաժարվեցի գնալ Լեհաստան, իսկ մինչ այդ, հրաժարվել էի այցելել Ռումինիա, հետաձգել եմ այցը Ֆրանսիա, նաեւ Գերմանիա ու այնտեղ կայցելեմ միայն ընտրություններից հետո, իսկ ԱՄՆ-ում ինձ սպասում են այսօր էլ, սակայն ես այնտեղ կլինեմ միայն այն բանից հետո, երբ ավելի շատ բան անեմ երկրի ներսում»,- նշել է նա:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ

## ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻ. «ՄԵՆՔ ԴԵՌ ՈՒՆԵՆՔ ԱՄՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔԸ»



*Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, ԱՄՆ կատարած այցի շրջանակներում, ելույթ է ունեցել Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում:*

Իր ելույթում Միխեիլ Սաակաշվիլին խոսել է վրաց-ամերիկյան հարաբերությունների եւ ISAF առաքելությանը Վրաստանի մասնակցության մասին:

Նախագահը նշել է, որ Վրաստանը, որպես ԱՄՆ-ի դաշնակից, կարողացել է իրականացնել ժողովրդավարության եւ ազատության այն գաղափարները, որոնք դավանում են Ամերիկայի Միացյալ Նահանգները:

«Մենք ունենք կոռուպցիայի ամենացածր ցուցանիշը Եվրոպայում, եւ համարվում ենք ամենաանվտանգ երկիրը»,- ասել է Սաակաշվիլին՝ ընդգծելով, որ վերջին 8 տարիների ընթացքում իրենք զարգացրել են տնտեսությունը եւ կարողացել ստեղծել ազատ ու ժողովրդավարական կառավարության մոդել: Սաակաշվիլին նշել է, որ այս ընթացքում Վրաստանն ունեցել է Կոնգրեսի եւ կոնգրեսականների աջակցությունը, որն անհրաժեշտ է նաեւ այժմ՝ երկրում ազատությունն ու ժողովրդավարությունը շարունակելու համար:

Իր ելույթում Սաակաշվիլին ափսոսանք է հայտնել Աֆղանստանում վրացի երեք զինծառայողների մահվան կապակցությամբ:

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

## ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է ՆԱԽԱԳԾԵՐԸ

*Վրաստանի կառավարությունը հաստատել է նախագծերը, որոնք ֆինանսավորվում են գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում: Երկրի մասշտաբով կֆինանսավորվեն 7 հազար նախագծեր, եւ ընդհանուր գումարը կկազմի 49.993.821 լարի: Մասնավորապես, Սամցխե-Ջավախեթիի վերաբերյալ հաստատվել է 430 նախագիծ:*

Կառավարությունը նաեւ ներդրումներ է փնտրում բարձրալեռ շրջաններում տուրիստական ենթակառուցվածքի զարգացման համար:

Ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, հանդիպում ունենալով խորհրդարանական փոքրամասնության հետ, նշել է, որ կառավարությունը լարված

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

## ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՀԱԶԱՐԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՋԱԽՋԱԽԵԼ ԵՆ ԳԵՅ-ՇՔԵՐԹԸ

*Մայիսի 17-ին, Հոմոֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ Թբիլիսիի կենտրոնում՝ Ռուսթավելիի պողոտայում, սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանները ծրագրում էին անցկացնել շքերթ:*



Հոգեւորականների եւ եկեղեցական համայնքների ու ոչ կառավարական մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից խրախուսված մարդիկ, հաղթահարելով ոստիկանության ջոկատաշղթան, ընդհարվել են սեռական փոքրամասնության կողմնակիցների հետ: Բախումների արդյունքում, բուժհաստատություններ է տեղափոխվել շուրջ 28 տուժյալ, այդ թվում՝ 5 ոստիկան:

Ոստիկանության տեղեկատվությամբ, ամբոխը աչքի էր ընկնում ծայրահեղ ագրեսիվությամբ:

Ոստիկանությանը հաջողվել

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵՎՐԱԽՈՐՀՈՒՐԴ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍՏԱՆՁՆԵՑ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

### ՍՏՐԱՍԲՈՒՐԳԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌՋԵՎ ԲԱՐՁՐԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՌԱԳՈՒՅՆԸ

*Ստրասբուրգի քաղաքապետարանի շենքի դիմաց բարձրացվել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահող Հայաստանի Հանրապետության պետական դրոշը:*




Ստրասբուրգում մայիսի 16-ին կայացել է Եվրոպայի խորհրդի անդամ երկրների արտաքին գործերի նախարարների 123-րդ նիստը, որին մասնակցել են ԵԽ 47 անդամ երկրների բարձրաստիճան պատվիրակությունները:

Նիստի ընթացքում, Հայաստանի ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանը ստանձնեց Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի նախագահությունը եւ հանդես եկավ Հայաստանի նախագահության առաջնահերթությունների վերաբերյալ ծավալուն ելույթով:

ԵԽ անդամ երկրների պատվիրակությունների ղեկավարներն իրենց ելույթներում, շնորհավորեցին Հայաստանին կազմակերպության նախագահությունը ստանձնելու կապակցությամբ:

Առաջիկա վեց ամիսներին Ստրասբուրգի քաղաքապետարանի առջեւ ծածանվելու են Ֆրանսիայի, Եվրախորհրդի եւ Հայաստանի դրոշները:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՋԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

*Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանն աշխատանքային այցով եղավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության մայրաքաղաք Բաթումիում:*



Հովհաննես Մանուկյանը հանդիպում ունեցավ Աջարիայի ինքնավար հանրապետության կառավարության ղեկավար Արչիլ Խաբաձեի հետ: Հանդիպմանը դեսպանին ուղեկցում էր Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը:

Հայաստանի դեսպանը իր առաջին քաղաքավարական այցի սկզբում շնորհավորեց Աջարիայի կառավարության ղեկավարին նման պատասխանատու պաշտոնում ընտրվելու կապակցությամբ եւ համագործակցության խորացման հույս հայտնեց ինքնավար հանրապետության ղեկավարության հետ:

Զրուցակիցները քննարկեցին փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ հարցեր, այդ թվում՝ զբոսաշրջային ոլորտում համագործակցության, Աջարիայի տնտեսությունում, մասնավորապես գյուղատնտեսության ոլորտում, հայկական ներդրումների հնարավորության, Աջարիայի եւ Հայաստանի Լոռու մարզի, ինչպես նաեւ փոխադարձաբար չորս քույր քաղաքների համագործակցության աշխուժացմանն առնչվող հարցեր, հայ համայնքի առանձին խնդիրների լուծմանը Աջարիայի կառավարության կողմից աջակցություն տրամադրելու հնարա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

## ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ՎԻՐԱՀԱՅ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

*Մայիսի 13-ին, Վրաստանում Հայաստանի դեսպանությունում, կազմակերպվել էր Հաղթանակի եւ խաղաղության տոնին նվիրված ընդունելություն:*

Ընդունելությանը ներկա էին գտնվում Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Հովհաննես Մանուկյանը, Վրաստանի նախագահի խորհրդական Վան Բայբուրթյանը, դեսպանության աշխատակիցներ, հոգեւոր դասի եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Վրաստանում Հայաստանի դես-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

# ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼ Է ՆԱԽԱԳԾԵՐԸ



(Սկիզբը՝ 1-ին էջում)

աշխատում է այդ ուղղությամբ:

Ինչպես լրագրողներին հայտարարել է կրթության փոխնախարար Դավիթ Լոմինաշվիլին, կրկնապատկվում է սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը ուսանողների համար: Այս մասին նա հայտարարել է կառավարության նիստից հետո՝ հաղորդելով, որ մինչ այդ, ֆինանսավորումը կազմում էր 1 միլիոն 280 հազար լարի, այժմ դարձել է 2 միլիոն 560 հազար լարի: Ծրագրի շրջանակներում, ֆինիանսավորվում էր 750 ուսանող, այժմ նրանց թիվն ավելանում է 400-ով:

ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻ ԹԵԿՆԱԾՈՒ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻՑ»



*«Վրացական երազանք» կառավարող կոալիցիայից Վրաստանի նախագահի թեկնածու է առաջադրվել առաջին փոխվարչապետ, Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլին:*

Նրան լրագրողներին ներկայացրեց Վրաստանի վարչապետ, կոալիցիայի ղեկավար Բիձինա Իվանիշվիլին: Մինչեւ թեկնածուին ներկայացնելը, Իվանիշվիլին խորհրդատվություններ ունեցավ կոալիցիայի քաղաքական խորհրդի, ապա՝ խորհրդարանական մեծամասնության հետ: «Վրացական երազանք»-ի քաղաքական խորհրդի անդամները միաձայն հավանություն են տվել Մարգվելաշվիլու թեկնածությանը, ինչից հետո այն ներկայացվել է խորհրդարանական մեծամասնությանը:

Իվանիշվիլին համարում է, որ Մարգվելաշվիլին Վրաստանի նախագահի արժանավոր թեկնածու է:

Վարչապետը հայտարարեց նաեւ, որ այդ պաշտոնի համար այլ թեկնածություններ չեն քննարկվել:

Գիորգի Մարգվելաշվիլին 43 տարեկան է, փիլիսոփայության դոկտոր, մինչեւ 2012 թվականի աշնանը նախարար նշանակվելը, եղել է Վրաստանի Ջուրաբ Ժվանիայի անվան հասարակական գործերի ինստիտուտի ռեկտորը:

Ինչպես հայտնի է, Վրաստանի նախագահի ընտրությունները կկայանան այս տարվա հոկտեմբերին:

# ՆԵՍՏԱՆ ԿԻՐԹԱՁԵՆ ԵՎՍ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻՆ

*«Վրաց-աբխազական եւ վրաց-օսական միջազգային շարժման» նախագահ Նեստան Կիրթաձեն 2013 թվականի հոկտեմբերին կքվեարկվի որպես Վրաստանի նախագահության թեկնածու:*



Նրա խոսքերով, նախագահական քարոզարշավը բարեկամ աբխազ եւ օս ժողովուրդների հետ երկխոսություն սկսելու իհանալի հնարավորություն է: «Երկխոսություն սկսենք կառավարության հետ երկի խաղաղ գործընթացի ու նրա պետական եւ տարածքային ամբողջականության կապակցությամբ»,- ասաց Կիրթաձեն: Նա նաեւ նշեց, որ ինքը հուսով էր, որ իշխանությունը նախագահի այնպիսի թեկնածու կառաջադրեր, ինչը Վրաստանի առջեւ ծառացած ամենակարեւոր մարտահրավերի՝ տարածքային ամբողջականության վերականգնման առաջին ազդանշանը կհանդիսանար: Նեստան Կիրթաձեի խոսքերով, իր համար «Վրացական երազանքի» կողմից Գիորգի Մարգվելաշվիլու թեկնածության առաջադրումը անհասկանալի է:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ ՀԱՆԴԻՊԵՑ ԱՋԱՐԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վորության խնդիրը:

Հովհաննես Մանուկյանը եւ Արչիլ Խաբաձեն պատրաստակամություն հայտնեցին շարունակել հետագա համագործակցությունը քննարկված խնդիրներին արդյունավետ լուծումներ գտնելու եւ բազմաոլորտ շփումներն առավել խորացնելու ուղղությամբ:

Իսկ դրա նախօրեին, Բաթումիում գտնվող Հայաստանի գլխավոր հյուպատոսության շենքում կայացավ Հովհաննես Մանուկյանի հանդիպումը համայնքային կազմակերպությունների ղեկավարների հետ: Հանդիպմանը մասնակցում էին Բաթումիում ՀՀ գլխավոր հյուպատոս Արամ Գրիգորյանը եւ Բաթումիի Սուրբ Խաչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Արարատ Գումբալյանը:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին հայ համայնքային կառույցների գործունեությանը վերաբերող խնդիրներ, աջարահայության սոցիալ-տնտեսական վիճակին եւ հոգեւոր-մշակութային կյանքին առնչվող հարցեր: Ներկաներն իրենց առաջարկներն ու տեսլականը ներկայացրին համայնքային կյանքի աշխուժացման եւ համայնքային բոլոր կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվելիք անհրաժեշտ քայլերի վերաբերյալ: Հատուկ առանձնացվեց եկեղեցու կարեւոր դերը համայնքի հոգեւոր-մշակութային կյանքում:

ՌԱԶՄԱԿԱՆ

# ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ՎՐԱՑԻ ԵՐԵՔ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ Է ԶՈՀՎԵԼ

*Աֆղանստանում անվտանգության աջակցման միջազգային ուժերի կազմում ծառայող վրացի երեք զինվորական է զոհվել մայիսի 13-ին ահաբեկիչների հարձակման հետեւանքով:*



Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիայի խոսքերով, հինգ մարդուց բաղկացած ահաբեկիչների խումբը ներխուժել է ռազմակայան: Վրացի զինվորականները պատասխան հարված են հասցրել եւ տեղում ոչնչացրել բոլոր ահաբեկիչներին: Հարձակման հետեւանքով, զոհվել է վրացի երեք զինվորական, կան նաեւ վիրավորներ:

Նշենք, որ վրացական զորակազմը ISAF-ի կազմում Աֆղանստանում խաղաղապահ առաքելություն է իրականացնում 2009 թվականից: Այն ժամանակվանից այդ երկրում զոհվել է 19 վրացի զինվորական: Պաշտպանական գերատեսչության տվյալներով, Աֆղանստանում ծառայում է 1545 վրացի զինվորական:

Մայիսի 16-ին՝ զոհված մարտիկների աճյունները Վրաստան տեղափոխելու օրը, Վրաստանում հայտարարվել էր սուգ:

ԻՐԱՐԱՆՑՈՒՄ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

# ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՆ ՈՒ ՀԱԶԱՐԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՁԱԽՈՂԵԼ ԵՆ ԳԵՅ-ՇՔԵՐԹԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

էր ակցիայի մասնակիցների մի մասին ավտոբուսներով դուրս բերել միջադեպի վայրերից, իսկ մյուս մասը փորձել է ցրվել մերձակա փողոցներում, թեպետ ենթարկվել են հալածանքի ու ֆիզիկական եւ բանավոր վիրավորանքների:

Բախումների վայրում հայտնված ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլուն սեռական փոքրամասնությունների դեմ հանդես եկող մարդիկ հասցրին բանավոր վիրավորանք: Օմբուդսմենը միայն ոստիկանների օգնությամբ կարողացավ հեռանալ դեպքի վայրից:

Ըստ ժողովրդական պաշտպանի, «Բոլոր մարդիկ ունեն արտահայտվելու իրավունք, եւ Վրաստանի քաղաքացիները պարտավոր են հարգել այդ իրավունքը»: Անդրադառնալով ոստիկանների գործողություններին՝ Ուչա Նանուաշվիլին նշեց, որ սկզբում իրավապահները վերահսկում էին իրավիճակը, սակայն ջակատաշղթայի ճեղքումից հետո գործընթացը դարձավ անկառավարելի:

Իր հերթին, Վրացական ուղղափառ եկեղեցու ներկայացուցիչ, սրբազան Իակոբը հայտարարեց, որ իրենք ոչ մեկին չեն հետապնդում, եւ բոլոր մարդիկ իրավահավասար են: Սրբազանը նաեւ հավելեց, որ «Այսօր վրաց ժողովուրդը ցուցաբերեց իր իսկական բնավորությունը», եւ հավաքվածներին կոչ արեց գնալ Սուրբ Երրորդության տաճար:



ՄԱԿ

## ԲԱՆԱՁԵՎ՝ ՍԻՐԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան մայիսի 15-ին ընդունել է բանաձեւ, որը դատապարտում է սիրիական հակամարտության սաստկացումը եւ դրա խաղաղ կարգավորման կոչ է անում:*

*Բանաձեւը, որը հանձնարարական բնույթ է կրում, պաշտպանել է 107 երկրների ներկայացուցիչ, 59 երկիր ձեռնպահ է մնացել քվեարկությունից, իսկ 12-ը, ներառյալ՝ Ռուսաստանը, Բելառուսը, Չինաստանը, Իրանը, Սիրիան, Վենեսուելան եւ ԿԺԴՀ-ն, դեմ են արտահայտվել: Մինչդեռ մեկ տարի առաջ Սիրիայի վերաբերյալ համանման բանաձեւը պաշտպանել էր 133 պետություն:*

ԱՄՆ

## ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ՆՎԱԶՈՒՄ Է

*ԱՄՆ-ի բյուջեի պակասուրդն այժմ նվազում է վերջին գրեթե 70 տարվա ընթացքում ամենամեծ արագությամբ: Այդ մասին մայիսի 16-ին հայտարարել է Սպիտակ տան մամուլի քարտուղար Ջեյ Քառնին:*

*Նրա խոսքով, վարչակազմը կպաշտպանի պակասուրդի նվազեցման «հավասարակշռված» ուղեգիծը, որը հարկերի բարձրացում է նախատեսում հարուստների համար: Նրա խոսքով, նախագահ Օբաման արդեն հասել է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) նկատմամբ պակասուրդի ավելի քան 50 տոկոս կրճատման:*

*Նախօրյակին Կոնգրեսի բյուջեի վարչությունը հաղորդել է, թե պակասուրդը, որը 2008 թվականի ճգնաժամից հետո տարեկան աճում էր 1 տրիլիոն դոլարով, սկսել է կրճատվել ավելի արագ, քան սպասում էին իշխանություններն ու տնտեսագետները: Ընթացիկ ֆինանսական տարում, որն ավարտվում է սեպտեմբերի 30-ին, պակասուրդը կկրճատվի մինչեւ 642 միլիարդ դոլար կամ ՀՆԱ-ի մինչեւ 4 տոկոսը, ինչը 200 միլիարդ դոլարով պակաս է, քան կանխատեսվել էր ընդամենը երեք ամիս առաջ:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՊԱՅԹՅՈՒՆ՝ ՌԵՅՀԱՆԼԻ ՔԱՂԱՔՈՒՄ

*Առնվազն 4 պայթյուն է որոտացել մայիսի 11-ին Թուրքիայի Հաթայ գավառի Ռեյհանլի քաղաքում, Սիրիայի հետ սահմանի մոտ: Պայթյունների զոհերի թիվը հասել է 51-ի, 100-ից ավելին վիրավորվել է:*

*Թուրքիայի ներքին գործերի նախարարը հայտնել է, որ 2 ականապատ մեքենա է պայթել քաղաքապետարանի հարեւանությամբ:*

*Ռեյհանլիում տեղի ունեցած ռումբային հարձակման հետ կապված 13 մարդ է ձերբակալվել:*

ԻՐԱՆ

## ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԻՆ ՀԱՎԱԿՆՈՒՄ Է 360 ԹԵԿՆԱԾՈՒ

*Իրանում ավարտվեց նախագահի թեկնածուների առաջադրումը: Ներկա դրությամբ, երկրի կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործառույթներն իրականացնող Պահապանների խորհուրդը ընդհանուր առմամբ 360 դիմում է ստացել:*

*Նախագահի պաշտոնում առաջադրվածների թվում են գործող նախագահ Մահմուդ Ահմադինեժադի ավագ եղբայրը՝ Դաուդը, Թեհրանի քաղաքապետ Մոհամադ Ղալիբաֆը, նախկին փոխնախագահ, ազատականի համարում ունեցող Մոհամադ Ռեզա Արեֆն ու խորհրդարանի նախկին խոսնակ Ղոլամ Ալի Հադդադ Ադելը. վերջինը համարվում է Իրանի հոգեւոր առաջնորդ Ալի Խամենեիի աջակցությունը վայելող թեկնածու:*

*Վերջին պահին Պահապանների խորհրդին առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերն է ներկայացրել Իրանի միջուկային հարցերով գլխավոր բանագնաց Սաեդ Ջալիլին:*

*Նախագահական ընտրությունները Իրանում կկայանան հունիսի 14-ին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վրաստանը ցանկանում է դառնալ կապող օղակ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ:*




Այս մասին Թբիլիսիում հայտարարեց Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, «Ասիայի եւ Եվրոպայի կապը նշանակում է տարածքային տնտեսական ինտեգրում Հարավային Կովկասում եւ Ասիայում» միջազգային համաժողովում: Այն կայացավ «Թբիլիսի Մերիոտ» հյուրանոցում, Միացյալ Նահանգների պետդեպարտամենտի եւ Կենտրոնական Ասիայի ու Կովկասի ուսումնասիրության ինստիտուտի հովանավորությամբ:

«Այսօրվա հանդիպման թեման է՝ միջանցք Ասիայի եւ Եվրոպայի միջեւ, որի կենտրոնը Վրաստանն է: Վրաստանի կառավարությունը մեծ ցանկություն ունի խաղաղ կապ ստեղծողի դեր եւ զարգացնել տարանցիկ միջանցք, ինչը Վրաստանի համար ներկայացնում է ռազմավարական հետաքրքրություն»,- ելույթում ընդգծեց վարչապետը:

Այդ կապակցությամբ, Իվանիշվիլին նշեց երեք առաջնային ուղղություններ՝ միջանցիկ ենթակառուցվածքի բարելավումը, ազատ բիզնես-միջավայրի ստեղծումը, արդյունավետ համագործակցությունը հարեւան երկրների հետ:

Վարչապետն ընդգծեց, որ բիզնեսի եւ տարածքային համագործակցության զարգացմանը նպաստում է այն, որ մանր կոռուպցիային զուգընթաց, նոր կառավարությունն արմատախիլ արեց նաեւ վերնախավային կոռուպցիան:

Խորհրդաժողովին ներկա էր ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Լին Ֆեյնը:

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՈՒՄ

## ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ՝ ԱԿՏԻՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿՈՉ

### ՎՐԱՍՏԱՆԻ ԱԳՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԵԼՈՒՅԹԸ ԵԽ ՄԻՆԻՍՏԵՐԻԱԼՈՒՄ




*Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեն, ԵԽ մինիստերիալում դիմելով Եվրախորհրդի անդամ երկրների արտգործնախարարներին, հիմնականում խոսեց օկուպացման մասին:*

«Մենք վերստին ընդգծեցինք նման վիճակի անթույլատրելիությունը եւ Եվրախորհրդին կոչ արեցինք ակտիվորեն մասնակցել Վրաստանի տարածքում առկա հակամարտությունների կարգավորմանը»,- ընդգծել է Փանջիկիձեն:

Մինչեւ մինիստերիալին մասնակցելը, Մայա Փանջիկիձեն հանդիպում ունեցավ ԵԽ գլխավոր քարտուղար Թորբոր Յագլանդի հետ:

«Եվրախորհուրդը ճանաչում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը, եւ դա է այդ երկրի հետ մեր հարաբերությունների հիմքը»,- նշել է գլխավոր քարտուղարը եւ գոհունակություն հայտնել այն առթիվ, որ վրացական կողմի հետ աշխատանքի արդյունքում հաջողվում է մշտապես կառուցողական միջոցներ ձեռնարկել՝ ժնեւի գործընթացը պահպանելու ուղղությամբ, որ վերաբերում է հակամարտությունների կարգավորմանը Վրաստանում:

Ստրասբուրգում անցկացվող մինիստերիալին մասնակցեց ԵԽ անդամ երկրների 46 արտգործնախարար:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

## ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ

*Խորհրդարանի խոսնակ Դավիթ Ուսուփաշվիլին հայտարարել է, որ, գործարարների հետ հանդիպումների արդյունքում ձեռք բերած փոխզիջումների շնորհիվ, կհամաձայնեցվի աշխատանքային օրենսգրքի տարբերակը:*

«Պետք է համաձայնեցվեն օրենսգրքում կատարվելիք փոփոխությունների եւս մի քանի հարցերը: Արդեն երեք շաբաթ հանդիպումներ են կայանում գործարարության ներկայացուցիչների, օտարերկրյա փորձագետների հետ, եւ մենք մոտ ենք փոխզիջման»,- ասել է Ուսուփաշվիլին:

Նա նշել է, որ օրինագծում կպահպանվեն բոլոր հիմնական պարամետրերը, եւ խորհրդարանը գալիք շաբաթ կվերսկսի աշխատանքը տվյալ հարցի ուղղությամբ:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

## ՀԱՆԴԻՊՈՒՄ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԵՏ

*Ուսուցիչների պրոֆեսիոնալ զարգացման ազգային կենտրոնում կայացավ աշխատանքային հանդիպում դպրոցների տնօրենների եւ մանկավարժների հետ:*



Հանդիպմանը քննարկվեցին Եվրախորհրդի եւ Վրաստանի կրթության նախարարության կարեւորագույն համատեղ նախագծերը:

Հանդիպումը կայացավ Եվրոպայի Շաբաթվա շրջանակներում, եվրոպական եւ եվրատլանտյան ինտեգրման պետնախարարի աշխատակազմի համագործակցությամբ: Հանդիպմանը մասնակցեցին պետնախարար Ալեքսի Պետրիաշվիլին եւ կրթության փոխնախարար Դավիթ Ջուրաբիշվիլին:

Ծրագրի ֆինանսավորման ժամանակ նրանք, ովքեր ցանկանում են աշխատել որպես մանկավարժ, հնարավորություն կունենան դպրոցներում աշխատել որպես հայցողներ:

ՔՐԵԱԿԱՆ

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԳ ԱՌԱՋԻՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ՏԵՍԱՆՅՈՒԹԻ ԱՊՕՐԻՆԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԵՋ



*ՆԳ նախարարության գլխավոր տեսչության աշխատակիցները ձերբակալել են Վրաստանի ներքին գործերի առաջին փոխնախարար Գելա Խվեդելիձեին: Նախարարության մամլո ծառայությունից տեղեկացրել են, որ Գելա Խվեդելիձեն մեղադրվում է Վրաստանի քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործության մեջ:*

Հետաքննությունը պարզել է, որ Գելա Խվեդելիձեն ապօրինի կերպով համացանցում տարածել է տեսանյութեր՝ լրագրող Գիորգի Պարեսաշվիլու անձնական կյանքի մասին:

ՆԳ նախարար Իրակլի Ղարիբաշվիլին իր առաջին տեղակալի ձերբակալման կապակցությամբ հատուկ հայտարարության մեջ ընդգծել է, որ Խվեդելիձեի տարածած կադրերը միանգամայն ապօրինի կերպով նկարահանվել էին նախկին կառավարության օրոք, սահմանադրական անվտանգության դեպարտամենտի կողմից՝ նպատակ ունենալով ահաբեկել եւ շանտաժի ենթարկել լրագրողին, նրան հարկադրել վարչակարգի հետ գաղտնի համագործակցության:

Նախարարը հայտարարել է, որ Գելա Խվեդելիձեն ընդունել է իր մեղքը:

«Ինձ համար դա տհաճ փաստ է, սակայն իմ առաջին տեղակալ Գելա Խվեդելիձեն, ցավոք, կատարել է ոչ միայն հանցագործություն, այլեւ արարք, որը վայել չէ ՆԳ նախարարության աշխատակցին»,- հայտարարել է նախարար Իրակլի Ղարիբաշվիլին:

Վրաստանի ներքին գործերի նախկին առաջին փոխնախարար Գելա Խվեդելիձեն Թբիլիսիի քաղաքային դատարանի որոշմամբ 5 հազար լարի գրավի դիմաց ազատվել է կալանքից:

Դատախազությունը վճռաբեկ դատարանին բողոքարկել է քաղաքային դատարանի որոշման դեմ:



### ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ բանկային հատվածի ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը ներկա էր նաեւ գյուղատնտեսության նախարարի պաշտոնակատար Շալվա Փիփիան:*

*Վարչապետին ներկայացվեց տեղեկատվություն՝ Վրաստանում գործող բանկերի հետ մեկտեղ գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացվող նախագծերի ընթացքի մասին:*

*Վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ նաեւ Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) պատվիրակության անդամների հետ: Քննարկվեցին ընթացիկ եւ գալիք նախագծերը:*

### ՀԱՂԹԱՀԱՐՎԵԼ Է ՆԱԽԱԳԱՀԻ ՄԵԿ ՎԵՏՈ

*Խորհրդարանի իրավաբանական կոմիտեն հաշվի չի առել նախագահի դիտողությունը՝ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում կատարվելիք փոփոխությունների կապակցությամբ: Կոմիտեն չի պաշտպանել նախագահի այն դիտողությունը, որը վերաբերում է Սահմանադրական դատարանի կողմից որոշումների ընդունման ժամկետների ավելացմանը:*

*Նախագահը վետո էր դրել նաեւ բուհերի իրավաբանական կարգավիճակը սահմանելու վերաբերյալ օրինագծի վրա: Այս կապակցությամբ կոմիտեի նախագահ Վախթանգ Խմալաձեն համարում է, որ տվյալ դեպքում վետո հաղթահարելու անհրաժեշտություն չկա, քանի որ, ինչպես ասել է նա, թե' նախագահի դիտողությունները, թե' ընդունված օրինագիծը չեն ապահովի տվյալ հարցի շուրջ առկա հիմնախնդիրների լուծումը: Խմալաձեն համարում է, որ երկրորդ օրինագիծը լրացուցիչ ուսումնասիրման կարիք ունի:*

### ՍՏՈՐԱԳՐՎԵՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

*Վրաստանը եւ Հունգարիան ձեւակերպել են էկոնոմիկայի եւ զբոսաշրջության ոլորտում համագործակցության համաձայնագիր: Փաստաթուղթը ստորագրել են պաշտոնական այցով Հունգարիայում գտնվող Վրաստանի ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն եւ Հունգարիայի միջազգային հարաբերությունների ու էկոնոմիկայի պետքարտուղար Պիտեր Սիարտոն:*

*Կողմերը նշեցին, որ տվյալ համաձայնագիրը կնպաստի հունգարական ընկերությունների եւ ներդրողների տնտեսական գործունեության հետագա ակտիվացմանը Վրաստանում: Նաեւ ձեռք է բերվել համաձայնություն Վրաստանի եւ Հունգարիայի տնտեսական հանձնաժողով ստեղծելու մասին:*

### ՊԱՐԶՈՒՄ ԵՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

*Վրաստանի ֆինանսների նախարարությունն աշխատում է խորհրդային ավանդների ստույգ ծավալը պարզելու ուղղությամբ: Հիշեցնենք, որ խորհրդարանական մեծամասնության ղեկավար Դավիթ Սագանելիձեն առաջիններից մեկը հրապարակայնորեն հայտարարեց, որ նոր կառավարությունը զբաղվում է խորհրդային ավանդները վերադարձնելու հարցով:*

*Ֆինանսների նախարարությունից հայտարարել են, որ ներքին պարտքով զբաղված հատուկ հանձնաժողովն իրականացնում է վերստուգում, որպեսզի ստույգ պարզվի պարտքի չափը: Հաջորդ խնդիրը կլինի պարտքի վերադարձման մեխանիզմների մշակումը:*

*Դրա հետ մեկտեղ, գերատեսչությունից պարզաբանել են, որ բյուջեն մեկ տարվա ընթացքում, առավել եւս այս տարի, չի կարողանա ծածկել պարտքը:*

ՄԱՄԼՈ ԱՍՈՒԼԻՍ

# ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆՆ ԻՐ ԲԱԽՏԸ ԻՆՔԸ ԿՈՐՈՇԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

## ՀԱՂԹԱՀԱՐՎԵԼ Է ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԹԵՐԱՀԱՎԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի վարչապետ Իվանիշվիլին նշում է, որ երկրում իշխանության գլուխ անցած նոր թիմի նկատմամբ փոխվել է աշխարհի պետությունների վերաբերմունքը: «Մեզ հաջողվեց մեր հանդիպումների արդյունքում հասնել այն բանին, որ Եվրոպայում եւ աշխարհում մեզ արդեն հարկ չի լինում արդարանալ եւ բացատրել, թե ով ենք մենք եւ ինչ ենք ներկայացնում»: Այս մասին Բիձինա Իվանիշվիլին հայտարարել է լրագրողների հետ հանդիպման ընթացքում:

«Ես շնորհակալ եմ հասարակությանը, որը սովորել է տարբերել ճշմարտությունն ու սուտը եւ չենթարկվել նախագահի սադրանքներին, որ փորձում է բուհեր իր հաճախակի այցելություններով հարուցել միջադեպ: Սակայն մենք արդեն հասուն հասարակություն ենք եւ չենք ենթարկվում այդպիսի սադրանքների»,- ասել է նա:

## «ԿԳՆԱՄ, ԵՐԲ ՀԱՐԿԱՎՈՐ ԼԻՆԻ»

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին մայիսի 14-ին հայտարարել է, որ մտադիր է քաղաքականության մեջ մնալ այնքան ժամանակ, քանի դեռ դա անհրաժեշտ կլինի հասարակությանը:

«Քաղաքականությունն ինձ սրտամոտ չէ, քանի որ հարկավոր է կատարել բազմաթիվ խոստումներ, եւ ես առայժմ դրանից գլուխ չեմ հանում: Ինչ վերաբերում է հեռանալու վերաբերյալ իմ արած հայտարարությանը, ապա ես քաղաքականության մեջ կլինեմ այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտ կլինի, եւ եթե հեռանամ, ապա միայն ավելի բարդ պաշտոնի, որն անհարժեշտ կլինի հայրենիքին»,- հայտարարել է Իվանիշվիլին մամուլի ասուլիսում:

## ԷԿՈՎՏԱՐԱՆԴԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ, ԻՐՈՔ, ԾԱՆՐ Է

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին Աջարիայից էկովտարանդիների վիճակը ծանր է համարում: Ինչպես հայտնի է, դեռեւս 2000 թվականին կառավարությունը վերին Աջարիայից մարդկանց վերաբնակեցրեց Ծալկա, որտեղ նրանց խոստացել էին Հունաստան տեղափոխված տեղի հույներից գնված բնակարանները: Թեպետ գնումները չիրականացվեցին, իսկ հիմա հույները վերադառնում են եւ պահանջում իրենց գույքի վերադարձում: Վարչապետը չի բացառում, որ էկովտարանդիների հարցի լուծման համար անհրաժեշտ է ընդունել քաղաքական որոշում:

## ՀԻՄՔԵՐ ՉԿԱՆ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի վարչապետը գտնում է, որ երկրում վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ անցկացնելու շանսը հավասար է զրոյի: Այս մասին նա հայտարարել է մայիսի 14-ի մամլո ասուլիսում:

Վարչապետի խոսքերով, նման հնարավորություն ունեցավ նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, բայց նա դրանից չօգտվեց:

«Վաղաժամկետ խորհրդարանական ընտրություններ նշանակելու համար պետք է լինեն հիմքեր՝ երկրում պետք է սկսվի ճգնաժամ: Մենք՝ ինքներս, այն չենք կարող առաջացնել, քանի որ մեծամասնություն ենք, իսկ արհեստական կարգով այդ անել մտադիր չենք»,- նշել է Իվանիշվիլին:

## ՎԱՐՉԱՊԵՏԸ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վարչապետը բնավ ահավոր չի համարում Համաշխարհային բանկի այն կանխատեսման կապակցությամբ, որ Վրաստանում կլինի էկոնոմիկայի աճի նվազում: «Նախկին իշխանությունները սխալ էին հաշվում ներքին համախառն արտադրանքը, եւ ցուցանիշերն աճում էին պետական օբ-



յեկտների շինարարության հաշվին, ընդ որում՝ ծախսում էին ավելի մեծ գումարներ, քան պահանջվում էր»,- նշել է Բիձինա Իվանիշվիլին ՁԼՄ-ների ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ:

«Մենք էկոնոմիկայից աճ ենք սպասում այս տարվա երկրորդ կեսին, երբ կսկսվեն հիմնական ենթակառուցվածքային նախագծերը»,- ասել է նա:

Իվանիշվիլին հավաստում է, որ նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի ժամանակ Վրաստանում համախառն ներքին արտադրանքը կազմել է 10 տոկոս, իսկ Միխեիլ Սաակաշվիլու ժամանակ՝ 5 տոկոս:

## «ՎՐԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ ԶԻՋԵԼՈՒ ԷԼ ՈՉԻՆՉ ՉՈՒՆԻ»

Վրաստանի վարչապետը երկրի համար բնավ վտանգավոր չի համարում այն, որ Ստրասբուրգում մայիսի 16-ին Եվրախորհրդի մինիստերիալում չի քննարկվել վրաց-ռուսական հակամարտությունը: Միաժամանակ, նա ընդգծել է, թե «Եվրոպայում հիանալի գիտեն, որ մենք ձգտում ենք եվրաինտեգրմանը եւ ՆԱՏՕ-ին անդամակցությանը, որ վրաց-ռուսական հարաբերությունները կարտացոլվեն Եվրախորհրդի գլխավոր քարտուղարի զեկուցման մեջ»:

Վրաստանն անպայման կկարգավորի հարաբերությունները Ռուսաստանի հետ, չնայած նախագահ Միխեիլ Սաակաշվիլու եւ նրա թիմի խիստ հակադրությանը: Այս մասին լրագողների հետ հանդիպմանը հայտարարել է վարչապետ Բիձինա Իվանիշվիլին:

Նա գտնում է, որ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման կարելի է հասնել «ճիշտ մենեջմենթի եւ ճիշտ դիվանագիտության հաշվին»:

«Մենք մեծ բավականությամբ Ռուսաստանի հետ փոխզիջման կգնայինք, սակայն զիջելու էլ ոչինչ չունենք»,- հայտարարեց վարչապետը:

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին մամլո ասուլիսում հայտարարել է, որ եթե չլինեին նախկին իշխանության սխալները, հարձակումները՝ Ռուսաստանի հասցեին, Վրաստանն այսօր կլիներ ՆԱՏՕ-ի անդամ եւ կունենար նորմալ հարաբերություններ Ռուսաստանի հետ: «Մենք այլեւս թույլ չենք տա այդպիսի սխալներ»,- նշել է վարչապետը:

Միաժամանակ, վարչապետի կարծիքով, Ռուսաստանի ղեկավարությունը գիտակցում է, որ անջատված տարածքները իրեն չեն բերի ոչ մի օգուտ եւ «Ռուսաստանը չի խանգարի ՆԱՏՕ մեր ընդունվելուն»:

## ՎԱՐՉԱՊԵՏԸ ՉԻ ԲԱՑԱՌՈՒՄ, ՈՐ ԿԱՐՈՂ Է ԱՅՑԵԼԵԼ ՍՈՉԻ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, ինչպես հայտարարել է լրագրողների հետ հանդիպմանը, չի բացառում այն հնարավորությունը, որ ինքը կարող է ներկա գտնվել Սոչիում կայանալիք օլիմպիական խաղերին: «Այդ մասին դեռ վաղ է ասել, սակայն ոչինչ չի կարելի բացառել: Մինչեւ Սոչիի օլիմպիական խաղերը մնացել է յոթ ամիս: Ես հրավեր չեմ ստացել, թեեւ առանց դրան էլ կարելի է գնալ Սոչի: Տեսնենք, թե ինչպես կզարգանան իրադարձությունները»,- նշել է Իվանիշվիլին:

## ՎԱՐՉԱՊԵՏԸ ԽՈՍՏԱՆՈՒՄ Է ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի վարչապետը հանդես է գալիս հօգուտ այն բանի, որ նախորդ վարչակազմից տուժած քաղաքացիներից ու գործարարներից դատախազությունում ստացված բոլոր գանգատները քննարկվեն:

Լրագրողների հետ հանդիպման ժամանակ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ ստացվել են հազարավոր դիմումներ, եւ բոլորը կքննարկվեն, «քանի որ արդարության վերականգնումը մեր խնդիրն է եւ նախընտրական խոստումը»:

Ըստ տվյալների, Վրաստանի դատախազությունը քաղաքացիներից ստացել է 20 հազար դիմում, եւ բոլորը պնդում են, որ խախտվել են իրենց իրավունքները, եւ որ իրենք բռնի կերպով զրկվել են սեփականությունից:

## ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ Է ՏՎԵԼ ԴԱՎԻԹ ԿԻՐՎԱԼԻՁԵԻ ՈՐՈՇՄԱՆԸ

Վրաստանի վարչապետը հայտարարել է, որ գյուղատնտեսության նախկին նախարար Դավիթ Կիրվալիձեն իր գերատեսչությունում կատարած միջադեպից հետո վարվել է շատ կուլտուրական ձեւով՝ հայտարարելով, որ պաշտոնից հեռանում է մինչեւ հետաքննության ավարտը: Այս մասին նա հայտարարել է ՁԼՄ-ների հետ հանդիպման ժամանակ, հավելելով, որ կալանվել են այդ գերատեսչության մի քանի աշխատակիցներ:

«Ես շատ եմ ցանկանում, որ արդարացվի ոչ միայն Կիրվալիձեն, այլեւ մյուս անձինք, սակայն կասկածում եմ այդ բանում»,- ասել է Իվանիշվիլին:

ՄԱՅԻՍԻ 9-Ը ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՕՐՆ Է

# ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ՎԻՐԱՀԱՅ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պանության ռազմական կցորդի կողմից «Ծովակալ Իսակով» եւ «Մարշալ Բաղրամյան» հուշամեդալներ, պարգեւներ ու արժեքա-



վոր նվերներ հանձնվեցին Երկրորդ աշխարհամարտի վետերաններին եւ Արցախյան հերոսամարտի թբիլիսահայ մասնակիցներին:

Հայաստանի պաշտպանության նախարարության գերատեսչական պարգեւների հանձնման արարողության ավարտին դեսպան Մանուկյանը շնորհավորեց Հայրենական մեծ պատերազմի եւ Շուշիի ազատագրման համար մղված մարտերի մասնակիցներին մայիսյան եռատոնի կապակցությամբ ու նշեց, որ նրանց սխրանքը հայրենասիրության օրինակ է յուրաքանչյուր հայորդու համար:

# ՆՈՐ ՀՈՒՇԱԿՈԹՈՂ ԿԱՐՏԻԿԱՄՈՒՄ

*Ընթացիկ տարվա Մայիսի 9-ը առանձնակի նշվեց Ախալքալաքիի շրջանի Կարտիկամ գյուղում: Այդ օրը այստեղ հանդիսավոր պայմաններում բացվեց Մեծ հայրենականի մասնակիցներին նվիրված հուշակոթող:*



Դեռեւս երկու տարի առաջ, ռուսաստանաբնակ կարտիկամցի գործարանները նախաձեռնել էին կանգնեցնել հաշահամալիր Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների անունները հավերժացնելու նպատակով:

Հուշահամալիրի բացմանը ներկա էր ողջ գյուղը: Այստեղ էին նաեւ մունիցիպալիտետի սակրեբուլոյի եւ վարչության նախագահներ Հ.Մովսիսյանն ու Ն.Իրիցյանը, պատգամավորներ Ս.Ուզունյանը, Վ.Բարոյանը, Հ.Կարապետյանը եւ այլոք:

Ռուսաստանից ժամանել էին նախաձեռնող խմբի ղեկավար Հ.Ճնավայանը, Օտրյադնիի հայ համայնքի նախագահ Վ.Սարյանը, աշխատանքի վետերաններ Ա.Պոզոյանը, Մ.Գաբրիելյանը, գործարար Պ.Գաբրիելյանը, Մ.Ղինոյանը:

Կարտիկամի հանրային դպրոցի տնօրեն Արարատ Էլիզբարյանը մանրամասնորեն ներկայացրեց Կարտիկամ գյուղի պատմական անցյալը, կարտիկամցիների մասնակցութունը Մեծ հայրենականին: Ապա Օտրյադնիի հայ համայքի նախագահ Վալերի Սարյանը ներկայացրեց Հովսեփ Ճնավայանի, Կոլյա եւ Գրիգոր Դումանյանների, Աղասի Պողոյանի, Վովա Եսայանի, Երջանիկ Ճնավայանի, Պետրոս Գաբրիելյանի, Վոլոդյա, Մեռուժան, Ռուբեն Ղինոյանների, Վանիկ Ճնավայանի, Վոլոդյա Էլիզբարյանի եւ այլոց անունները, որոնք իրենց նյութական աջակցություն էին ցուցաբերել հուշահամալիրի կառուցմանը:

Ծաղիկներով եւ ծաղկապսակներով զարդարված հուշահամալիրի հավերժական կրակի գործարկման պատիվը տրվում է Հայրենականի միակ վետերանին՝ Ռուբեն Ղինոսյանին:

Հանդիսավոր արարողությունն ավարտվեց մշակույթի տան (ղեկավար՝ Աշխեն Ճնավայան) երգի, պարի համույթի, Կարտիկամի հանրային դպրոցի աշակերտների ելույթով:

*ՎԱԶԳԵՆ ԵՍԱՅԱՆ*
*Բավրայի հանրային դպրոցի փոխտնօրեն*